

Գ Ա Յ Յ Ր Ե Ն Ե Ի Ք

10
Փարայ

ՕՐԱԹԵՐԹ

10
Փարայ

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՂԱԲԱԿԱՆ ԵՒ ԲԱՆՏԱԽԻՐԱԿԱՆ

Հայրենիք ամեն օր կը նրատարակուի, տարեկան զինն է Պոլսոյ Ե գաւառաց համար 7 արծար մեծիս կանխիկ . գաւառական թղթուտարուրեան ծախքը մեր վրայ է : վեցամսեայ Ե եռամսեայ բաժանորդք ալ կը ներկայանան :

Հրազդան վերաբերեալ գիր կամ նամակ պէտք է ուղղել առ Տէր-Խմբագիր Բիգա փաշա խան Թ. 14 . Խմբագրութեան ուղղեալ գիր ետ չէ տրուիր : Իրանուցման տողը մեկ անգամի համար 3 դրուչ է . տեղի անգամի համար սակարկութիւն կը լլայ :

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Կ Ի Լ Ի Կ Ի Ա.

Կիլիկիոյ կաթողիկոսական խնդիրը վերջապէս օրինաւոր շաղկին մէջ մտնել սկսած է և սիրելի է մեզ յուսալ որ Կիլիկիոյ Ա. մեն. Տ. Մկրտիչ Ս. կաթողիկոսի և վարչութեան խմատունն շանից շնորհիւ իւր լուծման մերձակէտին հասնելու մօտ է :

Վերջին անգամ կարգեալ Յանձնախումբը որ փութաձան և բանգէտ անձերէ կը բաղկանայ, Կիլիկիոյ խնդրոյն կանոնադիր մը խմբագրելու պաշտօնն ստանձնած է զոր ի զուտ պիտի հանէ, հետեւեալ անշուշտ Կիլիկիոյ և նորայն Ազգին շահուց որոյ առաւել քան զքնաւ պարտիմը հպատակիլ այսպիսի փափուկ և քննադատելի ժամանակի մը մէջ :

Չեմք ուզեր անցելոյն տխուր քողբանալ և պարզել այն ամէն արգելքները որք սոյն խնդրոյն կարգադրութեան արգելք եղան ցարդ . և ուղղակի կամ անուղղակի զլասեցին Կիլիկիոյ աթոռոյն շահուց կամ գաւառի ժողովրդեան իսկական դարման մը տանելու դժուարութեանց մատնեցին Կիլիկիոյ կաթողիկոսական իշխանութիւնը :

Ուստի հետեւելով այն առածին որ կըսէ «լաւ է ուշ քան երբէք» կուզամք շնորհաւորել Կիլիկիոյ Ս. կաթողիկոսը որ աթոռոյն անայայտելի պահպանութեան և բարգաւաճման համար Կեղր վարչութեան ունեցած փափաքը և բարի գիտաւորութիւնները փորձով տեսնելով, չուզեց այլ ևս պնդել այն պահանջներուն վրայ որք ժամանակին քաղաքականութենէն միայն ծնունդ առած ըլլալով, դարձեալ ժամանակին կամ ապագային շնորհիւ կրնան լուծուիլ և բարձուիլ . նոյնպէս վարչական խորհուրդը որ յետ երկարատև բանակցութեան զոր ունեցաւ Ս. կաթողիկոսին հետ, գիտակցութեամբ համոզուելովն, սըրբազնութեան Ազգին այս նուիրական աթոռոյն բարգաւաճ ծաղկման համար ունեցած զովելի փափաքանց, հեռի փառասիրական դիտումներէ և սնտի նկատումներէ, խնդիրն իւր մերկու-

թեամբ քննեց և դժբաղդարար երևան ելած թիւրմացութիւնները բառնալով խնդրոյն օրինաւոր լուծմանը դիմեց . և ահա այս եղաւ Յանձնախումբի ծնունդը :

Չգիտեմք թէ սոյն Յանձնախումբը խնդրոյն որ դոյնը պիտի քննէ, այսինքն լիկ Կիլիկիոյ աթոռոյն ընդ Պատրիարքարանի ունեցած յարաբերական մասը միայն պիտի քննէ և ըստ այնմ կանոնադիր մը պիտի խմբագրէ, թէ խնդրոյն կրօնական մասն ալ մէկտեղ պիտի քննէ : Եւ սակայն ինչ որ ալ լինի, տարակոյս չկայ որ օգտակար և մեծ դործ մը ըրած պիտի ըլլայ, եթէ խնդիրն երկուստեք համաձայնութեամբ լուծուիլ յաշուի : Բայց թէ ոչ, և ունի բոնաւոր և լաւագոյն միջոցը, յանդուութիւն ըրած չեմք համարուիլ կարծեմք եթէ ըսեմք որ Ազգին ներկայ վիճակին մէջ ամենէն դործնական և դործադրելի եղանակը Կիլիկիոյ կաթողիկոսութեան կեդրոնին հետ ունեցած յարաբերութիւնները ճշդելն է, վերապահելով նորա կրօնական մասը զոր ըստ մեր կարծեաց ապագայն և ժամանակը միայն կարող է լուծել հիշք այն սղուով և տեսութեամբ որով պարտաւորութեմք այսքան դարերէ ի վեր, զայն աթոռ հաստատուն և անկորոշում պահել, իսկ երբեակի կաթողիկոսութեան լուծումը ժամանակին հասանքին յանձնել :

Միւս կողմանէ ճշմարտութիւնը խոստովանած կը լինիմք կարծեմք եթէ ըսեմք որ Կիլիկիոյ աթոռը մինչև ցարդ ազգային լուսաւորութեան վառարան մը չըլլալէ զատ գոնէ փոքրիկ ծառայութիւն մ'ալ չէ կրցած մատուցանել գաւառին և նովաւ Ազգին . ասոր պատճառը շատ են, սակայն կրնամք մի քանին յիշել :

Սոյ վանքը պէտք էր ժառանգաւորաց վարժարան մ'ունենար, գոնէ իւր և իւր գաւառի ժողովրդեան օգտակար հովիւներ հասցնելու համար . սակայն չունեցաւ . Սոյ վանքը պէտք էր ունենար տպարան մը և մամուլ մը, սակայն չկրցաւ ունենալ : Սոյ վանքը պէտք էր ունենար այն ամեն միջոցները որոնք վանական հաստատութիւն մը լուսաւոր-

ութեան վառարան կրնեն . և վերջապէս Սիւս պէտք էր լինիլ ծաղկոց մը միաբաներ պահելու, զանոնք կը թելու և Կիլիկիոյ անխնամ գաւառները ցրուելով, անուս և տգէտ ժողովուրդը բարոյապէս և ուսումնապէս զարգացնելու, դաստիարակելու և Ազգին օգտակար անդամներ պատրաստելու համար :

Այն ամէնը չըլլալէ զատ ցաւալի է ըսել թէ Սոյ վանքն այն աստիճան թըշուուութեան հասած է որ միաբան մը, աշակերտ մը իսկ չկրնար պահել, և սակայն ասոր պատասխանատուութիւնը մի միայն Կիլիկիոյ արգի գահակալին վերայ մանրացնելն ալ կարծեմք իրաւունք չէ . զոր հասկնալու համար վանուց քրտանամետայ հաշիւը քննել հարկ կըլլայ անշուշտ, և ասիկա վարչութեան անհրաժեշտ պարտքն է ընել, համոզուելու համար թէ վանուց այն մեծագին արծաթեղէնները, կարասիք, դրամ և այլն, ինչ եղած են, ո՛ւր և որի՛ թով մնացեր են, և յափշտակիչք ինչ իրաւամբ ազգին դոյքն ու հարստութիւնը կապտեր և վանքը եթէ ոչ մեծագումար պարտուց գոնէ ամենայնեօրին թշուառութեան մատնեք են : Պէտք է բացատրութիւն պահանջել Ս. կաթողիկոսէն թէ ո՛րք են այդ մատնաւոր անձինք որ Սոյ վանուց դոյքերը գրաւած են, իւրեանց հարսին կամ աղջկան զարդ և օժիտ ըրեր, և թերևս ատոնցմով փարթամացեր են : Պէտք է հարցնել Ս. կաթողիկոսին թէ իւր գահակալութեան թուականին ինչ ունէր վանքը, ինչպէս կառավարեց զայն Տ-Ս երկար տարիներ, ինչ են հասոյթն ու ծախքը, և վանուց գրաւեալ կալուածները ո՛ր անխիղճ և անզգայ անձինք կուլ տուած են, խնդրոյն յարաբերական մասին հետ, մանաւանդ խմբագրելի կանոնադրութեան հետ մեծ առնչութիւն ունի վանուց հաշուական խնդիրը և առանց հաստատութեան մը իրական վիճակը գիտնալու ելնել անոր համար կանոն սահմանելը խելացի անձանց դործ չէ :

(Շարունակել)

Աղգային ժողովոյ երէկուան նիստը գրեթէ արգելաւոր չեղաւ : Քանի մը հարցումներ միայն նշան օրոնք ի նախաքննութիւն յղուեցան : ասոնց մին էր թորդոմեան Պողոս էֆէնտիի հարցումը, որ կը հարցնէր թէ ստոյգ է որ կեդ. սնտուկն այնքան նեղն է որ Ս. Պատրիարքին կառքին անգամ ստակ չկայ : Սոյն հարցումը Տնտ. խորհրդականին յղուեցաւ :

Անճեան Արիկ էֆէնտիի երեսփոխանութենէ հրատարական ընդունուեցաւ :

Պատրիարքական Գեր. փոխանորդ Հայրը Երուսաղիմայ խնդրոյն համար վերադառնալ Բ. Գուռն երթալով երէկ, յետ խորհրդակցութեան Դատական գործոց նախարարութեան հետ որոշուեցաւ հեռագրաւ հրաման զրկել Երուսաղիմայ կառավարչին որ Ս. Պատրիարքի և միաբանից ոմանց մէջ ծագած խնդրոյն բնաւ չմիջամտեն տեղական իշխանութիւնը, ինչպէս նաև Բ. Գուռը և խնդիրը բոլորովին Աղգ. Պատրիարքարանի տնօրէնութեանը թողուլ :

Հելլենաց թագաւորը Գրուա տը շը վարիէ տը լ'Օրորը բուայալ տիւ սովէօր պատուանշանը զրկեր է Գուրգէնեան վարժարանի հիմնադիր-Տնօրէն Յակոբ էֆէնտիի :

Սամաթիոյ Ս Գէորգ եկեղեցւոյ տօնախմբութեան առթիւ Ս. Պատրիարք Հայրը յառաջիկայ կիրակի օր Ս. Պատարագ մատուցանելու հրաւիրուած է հոն :

Հաճընցի հինգ երևելեաց խնդիրն զոր գրած էինք ասկէ առաջ, բարեխընամ կառավարութիւնն ուշադրութեան առնելով, և տեսնելով որ ամիսներէ անտի տարապարտուց կը դեգերէին յԱտանա, այս անգամ վերջացուցեր է : Ատանայէն քաջուած մասնաւոր հեռագրերէ մը գոհութեամբ կը տեղեկանամք թէ վսեմ. Ապէտին փաշան հրաման ըրած է յիշեալ աղգայնոց իւրեանց հայրենիք Հաճըն վերադառնալ ուր պիտի կատարուի ըստ որոյման արդարութեան պատժական ատենի նոցա մասին տեղի ունեցած ամբաստանութեանց նախնական քննութիւնը : Այս առթիւ պարտականութիւն կը սեպեմք խորին շնորհակալութիւն յայտնել Արդարութեան գործոց վսեմ. նախարարին և Ատանայի կուսակալ բարձրապատիւ Ապէտին փաշային որոնք արդարութեան և իրաւանց ձայներն լսելու և յարգելու մասին հանրածանօթ եղած են : նոյնպէս այս առթիւ շնորհակալութեան արժանի են Ս. Պատրիարք և նորին Գեր. փոխանորդ հայրը, որք պէտք եղած ջանքերն չխնայեցին մեր խեղճ Հաճընցի հայրենակցաց ազատութեանը համար : Բ.

Ն Ե Ր Ք Ի Ն

Արտաքին գործոց նախարարի խորհրդական վսեմ. Յարութիւն պէյ Տատեան կայսերական պալատան սպայի մը

հետ երկուշաբթի իրիկուն վեց տէրութեանց դեսպաններուն այցելութեան գնաց ի Վոսվօր :

Սոյն այցելութեան նպատակն էր, կըսէ վաղըթ, իմացնել գնասականայ թէ Յանձնախումբ մը զրկուած է Եգիպտոս և թէ ինչ է անոր նպատակը : Սոյն Յանձնախումբը հաւանականաբար երէկ Աղէքսանդրիա հասած և յանուն խըտիվին Աիւլ-Ֆիքար փաշայէն ընդունուած է : Երէկ Գահիրէէն դուռն մ'ալ պիտի զրկուէր Էլ-Ուատի, Ուրապի գնդապետին հրամանատարութեամբ :

Հալաս Եգիպտոսի նկատմամբ բաւական հեռագիր ցրուեց երէկ, սակայն հրատարակութեան արգելքը տակաւին բարձուած չլլալով, անկարելի է մեղթարգմանել :

Սթամպուլ սուտ լուեր հրատարակելուն պատճառաւ Տպագրական տեսչութեան հրամանաւ դադարեցաւ երէկ :

Պաշտատէն դարձուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Մունթէֆիքնեբու ապստամբութիւնը վերջանալով, Իզդէթ փաշայի բանակը Պաշտատ վերադարձեր է :

Հեռագրատան պաշտօնէին վազըթի դէմ բացած դատը քննելու համար Ապրօ էֆ. ի նախագահութեամբ Յանձնախումբ մը կարգուեր է :

Օսմանեան բանակին նախորդ տեղակալ Ահմէտ Թէվֆիք էֆ. միևնոյն աստիճանաւ Հելլենական բանակին մէջ ընդունուեր է :

Սեպտեմբեր 21ին (ըստ լատինաց) Տրապիզոնի մէջ այնքան յորդ անձրև մ'եկեր է, որ քաղաքը ջրով ողողուեր է : շատ մը մակոյկներ ընկղմեր, բազմաթիւ շէնքեր վլեր և վաճառք հանելու նաւամատոյցը արկններէն քրուեր տարուեր է : Այլ մը և կին մը գերան մ'առնուլ ուզելով ջուրին մէջէն, հոսանքէն ծովը մղուեր և խղճուեր են : Անձրևը տակաւին կը շարունակէ եղեր, իսկ քաղաքին շուրջը գողութիւնք և աւաղակութեան դէպքեր դժբաղդաբար տակաւին չեն դադար :

Ճէրիտէ կըսէ թէ Անգղիոյ կառավարութեան յանձնարարութեամբ Պարսից կառավարութիւնը իւր Բիւրա հպատակները հալածելէ դադար է, և կը յաւելու թէ Տաճկաստանի և Պարսկաստանի Բիւրտերը այժմ Անգղիոյ պաշտպանութիւնը կը վայելեն :

Թուրք լրագիրը կեղրակացնէ թէ ռուսք ալ Հայերը պաշտպանելով, Հայաստանի մէջ Անգղիոյ և Ռուսիոյ միջեւ հակառակութիւն ծագած է :

Ճէրիտէի այս տողերը բանդագուշանքէ անդին չեն անցնիր :

Լէվանթ գրած էր թէ վսեմ. Յարութիւն պէյ կիրակի օր հիւանդանանայով, Բ. Գրնէն իւր տունը դարձեր է : Սթամպուլ իւր վերջին թուոյն մէջ Լէվանթի այս լուրը հերքելով, կըսէ թէ Յարութիւն պէյ ամեն օր Բ. Գուռն երթալով իւր պաշտօնին կը զբաղի : Իսկ Բ. Գրան հետ ունեցած իւր յարաբերութիւնները տակաւին որոշուած չլլալով, նախկին վիճակին մէջ մնացած են :

Մայրաքաղաքի մէջ գործուած չարութեանց առաջն առնուլ համար օտարականներու թիւը պիտի կրկնապատկուի :

Հազրգաթ գրած էր երկու օր առաջ թէ Պարսից կառավարութեան Ֆէվաիա վէզիրը Սօլուք-Պուլաքի շէնքերը ռմբակածել և փախչող քիւրտերը թրէ անցնել տուեր է : և թէ 6000 ընտանիք Նիհրի փախեր ապաստաներ են :

Լէվանթ կըսէ թէ հրաման եղած է իրեն ըսելու թէ Հազրգաթի հրատարակած այս դէպքերը նորա խմբադրին երևակայութեան մէջ միայն տեղի ունեցած են :

Բուսանիոյ յունական վանքերու կառուածական խնդրոյն կարգադրութեան համար իբրաւարար Յանձնախումբ մը կարգելու առաջարկութիւնն ընելով Բ. Գուռը եւրոպական տէրութեանց, մայրաքաղաքիս Յունաց աղգային ժողովը և Սինօքը շնորհակալութեան ուղերձ մը յանձներ են Առաջին նախարարին վէհ. Սուլթանին մատուցանելու համար :

Թունուզի պէյին նախորդ նախարար Մուսթաֆա-պէ-Իսմայիլ Մարսիլիայէն անցած ատեն հոն գտնուող թունուզցիներուն փառաւոր կոչուեք մը տուեր է որուն համար 500 օսկի ծախսեր է : բաց ասկէ սոյն կոչուեքին ներկայ գտնուող քանի մը տիկիններուն մեծագին նուէրներ ալ տուեր է :

Պօլսոյ քաղաքապետութիւնը կ. Պօլսոյ գործարանաց մէջ գտնուող պաշտօնեայներուն մարդահամարը քննելու կըսեր է :

Պէրութի Հատիքաթ-էլ-Ալսպար լրագիրը սեպտեմբեր 22 թուով հետևեալ լուրերը կը հրատարակէ :

«Սմսոյս Աիին քաղաքս հասան Ասիոյ անդը. ընդհանուր հիւպատոս Սըր Ուիլսըն և Պօլսոյ դեսպանատան երկրորդ թարգման Պ. Նիքօլսըն, Պէրութի և Սիրիի անդղիական հիւպատոսարանները քննելու համար : Ասոնք 16 ին Պէրութէն Դամասկոս մեկնեցան, և հետևեալ օր կուսակալին այցելութիւն մ'ընելով, նոցա փոխադարձ այցելութիւնն ընդունեցան : 20 ին Պէրութ դարձան և հետևեալ օր շոգենաւ նստան Եսֆա և Երուսաղէմ երթալու համար :

«Բէննաթիթրա քաղաքին մէջ Չէրքէզներու և Պէտուիներու միջև կռիւ մը ծագելով, Հօրանի կառավարիչը անմիջապէս հոն գնաց և խաղաղութիւնը վերահաստատելով, յանցաւորները պատժելու համար քննութիւն բացաւ :»

Հ Ե Ռ Ա Գ Ր Ա Լ Ո Ւ Ր Ք

Լոնտրա 5 հոկտ. Վիէնայէն կը հեռագրեն առ Տէյլի Նիւզ թէ Չարին և Աւստրիոյ կայսեր տեսակցութիւնը տեղի պիտի ունենայ ի վարչաւիւ, Պէլլէտէրի դղեակին մէջ : Թունուզ Տ. հոկտ. Սօսիէ զօրավարն հրամայեց գրաւել Թունուզի բերդերը : Չօրք եկաւ ի Մէճէզ-էլ-Պապ, պէյին եղբայր Ալի պէյին

• գնեցու •

Փարիզ 5 հոկտ.

Թան կը հաստատէ թէ Պ. Ժիւլ Ֆէր-
րիի նախագահութեան ներքեւ գտնուած
նախարարութիւնն որչա՞ծ է հրատարիչ
ժողովոյ վերաբարցումէն 10 աւուր չափ
առաջ, որպէս զի նոր նախարարութիւնը
պատրաստ լինի ամսոյ 28ին, օր վերա-
բարցման:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Երէկ գանձային բանակցութեան ժո-
ղովը վերստին գումարեցաւ և Օսման-
եան պատուիրակները յայտարարեցին
Եւրոպայի փոխանորդներուն թէ վեր-
ջին ժողովոյն մէջ առաջարկեալ մետաքսի
հասոյթներուն վարչութեան յանձնուիլը
ընդունած է Բ. Դուռը. և ձուկի հա-
սոյթին համար ալ գալ նիստին իւր ո-
րոշումը պիտի յայտնէ: Նոր կազմուելիք
անուղղակի տրոյ վարչութիւնը ամեն աւե-
սակ դրամ պիտի ընդունի, Անգղիայի և
Գաղղիայի արժեթղթատեարք քովի թէ ին
և Իտալիոյ առևտրական պաշտօնարանի
կողմանէ մէյմէկ փոխանորդ պիտի կար-
գուին, որք սոյն վարչութեան մէջ իբր
պատուիրակ, 2000 սակոյ տարեկան
վարձքով պաշտօն պիտի վորեն: Գալա
թիոյ դրամատեարք ալ այսպիսի պատ-
ուիրակ մը կարգելու իրաւունք կուզեն
ստանալ, բայց Եւրոպայի փոխանորդ-
ները չեն հաճիր:

— Բաղաքագետ Մաղհար փաշա քա-
նի մ'օրէ ի վեր հիւանդ ըլլալով, Վեհ-
Սուլթանը իւր բժիշկներէն մին զրկեց
իւր ցաւակցութիւնը յայտնելու համար:

— Տէրվիչ փաշա Ալպանիայէն հաւա-
քած տուրքերէն մեծ գումար մը զրկեց
մայրաքաղաքս:

— Սօփիայէն զարնուած հեռագիր
մը կը ծանուցանէ թէ Պուլլարիոյ իշ-
խանութիւնը տէրութեանց հիւպատոս-
ներուն ծանուցեր է որ ապագայ երեք
տարիներու մէջ Պուլլարիա չլինար Օսմ-
պետութեան բնաւ տուրք վճարել և
թէ իշխանութեան հասոյթը մի միայն
երկաթուղեաց շինութեան պիտի յատ-
կացուի:

— Գերմանական դեսպանին առաջին
թարգմանը Բ. Դուռն երթալով երէկ,
արտաքին գործոց նախարարին հետ եր-
կու ժամու չափ տեսակցեցաւ:

ԱՐՏԱՔԻՆ

ՈՉՆՉԱԿԱՆ ԱՋՆՈՒԱԿԱՆՔ

Լոնտրայի կուպ լրագիրը Ոչնչականու-
թեան վրայ խել մը հետաքրքրական
տեղեկութիւններ կուտայ որոյմէ հե-
տևեալ մասը կը քաղեմք:

Այս աւուր ոչնչականութեան ամենէն
աւելի սարսափ պատճառող բանը այն
մեծ ազդեցութիւնն է զոր Ռուս ազնւ-
ւականք ստացած են: Պահակագնդի
առանձնաշնորհեալ խումբերուն, Մոս-
կուայի և Փեթրսպուրկի բարձր ընկե-
րութեանց և մինչև իսկ կայսեր անձ-
նական թիկնապահներուն և կայսրուհ-
ւոյն ննջարանին մէջ այնպիսի ձեռքեր

գտնուեցան վերջին թագաւորութեան
օրով որոնք ոչ միայն քովինիսթներու
խորհրդոց մասնակցեցին այլ և սպանու-
թեան ծրագիրներ գործադրելու հա-
մար բոլորով սրտիւ օգնեցին անոնց:

Դժբաղդաբար ստոյգ է թէ բազմա-
թիւ Ռուս ազնուականք իրենց կեանքն
ու ազատութիւնը վտանգի մատնելու
տրամադիր են Ռուսական «թիկները» ի-
րարու ետեւ ջնջելու համար:

Չմեռնային պալատի պայթումի գոր-
ծողութեան ատեն ձեռք բերուած զը-
րերը հանդուցեալ կայսրուհւոյն պալա-
տականներէն Բանին կոմսուհւոյն մաս-
նակցութիւնը կը յայտնէին:

Նիքոլա Բոնին կոմսը մեծիւ կատա-
րինէի օրով արտաքին գործոց պաշտօն-
եայ էր. սա մանկահասակ Պետրոս Բ.
ի բռնի գահընկեցութեան և անգթօրէն
մահուան մէջ մասնակցութիւն ունեցած
էր կրէկուար Օրլովի կոմսին հետ. այս
ընտանիքէն կոմսուհի մը կար որ Ռու-
սական անուանի առիւծ մ'էր:

Ներկայ համարուաւոր թագաւորին
օրով Ռուս ազնուականութիւնը տարբեր
կերպով չվարուեցաւ. մանաւանդ թէ
յայտարարեց որ ներկայ դրութեան
հակառակ է, այս հակառակութիւնն
աւելի կը ըզրացնէր Իկնաթիէվի դէմ
ունեցած տեսլութիւններն:

Չրոյց ելաւ թէ կալիկին անուանի ըն-
տանեաց անդամներէն մին ոչնչականաց
յարեալ էր. նոյնպէս Թօֆ զօրա-
վարին ձերբակալութիւնը որ պատե-
րաղական գործոց պաշտօնէութեան
գաղտնիքները յեղափոխական պարագը-
խոց հաղորդելու ամբաստանութեան
ենթարկուած էր. ինչպէս նաև սոյն ձեր-
բակալութենէն երևան ելած ահաւոր
յայտնութիւնք կայսեր իւր մօտաւոր
պաշտօնէից վրայ ունեցած վստահու-
թեան վերնալուն պատճառ եղան: Սա-
կայն կը կարծեմք զի սոսալ թէ Բրաթօթ-
քին իշխանին ծայրայեղ դիտաւորու-
թեանց մասնակցող և յեղափոխական
ծրագրին քիմիական միջոցները գոր-
ծադրելու հաւան Ռուս ազնուականաց
թիւը մեծ չէ:

Ռուսաստանի մէջ ազնուականաց ըն-
տանիքներու անգամոց կոմսի կամ իշ-
խանի տիտղոս տրուիլը Ոչնչական ազ-
նուականաց բուն հարստութեան և նը-
կատումներու մասին օտարականները
խաբելու սահմանուած միջոց մ'է. և
այն իշխաններն ու կոմսերը որք կալ-
ուածներու գրաւումը և ներկայ վիճա-
կին տապալումը կը քարոզեն, անոնք
ամենքը մեծ ընտանիքներու կրտսեր
անդամներն են, որք երկրին մէջ ոչ
գիրք, ոչ հարստութիւն ունին. այլ մի-
այն տիտղոս մը, անուն մը զոր ցեխե-
րու մէջ կը թաթախեն:

1825 ի յեղափոխութեան անդամնե-
րուն մեծ մասը այս կարգէն էին:

Թրուպէցքօ մը Միշէլ Բօմանօֆի դէմ
գահուն ընտրելի եղաւ. բանակին օդ-
նութիւնը վայելեց, և եթէ եկեղեցին,
նոյն ժամանակի գերագոյն իշխանու-

թիւնը, իւր ոսոխին կողմը չբռնէր, Թը-
րուպէցքօի ձմեռնային պալատան և Բը-
րէմիլինի գեթաղդ վեհապետը պիտի լի-
նէր այժմ:

Երբ քովինիսթ մը դատապարտուի
կը տեսնես որ Ռուս ազնուականութիւնը
անմիջապէս շնորհ ինդըրելու կեղնէ, Թը-
րուպէցքօյի իշխանը որ իւր մեծ ան-
ուան շնորհիւ իբր դիկտատոր սահման-
ուած էր Նիքոլայի դէմ դաւադրու-
թիւն մ'երևան ելած ատեն, ապստամ-
բութիւնը չը յաջողելուն պէս ինքզինքը
ծածկեց, և Չարին բարկութենէն աղա-
տելու համար Փեթրսպուրկի աւստրիա-
կան դեսպանին աղարանքը փախաւ, որ
իւր քեռայրն էր:

Ռուսիոյ արտաքին գործոց նախարար
Նէսէլրօտ կոմսը Թրուպէցքօն պահան-
ջեց դեսպանէն, և իշխանը կայսեր առ-
ջեն հանուեցաւ: Հանկաւալով որ անկա-
րելի էր յանցաւորութիւնն ուրանալ,
անմիջապէս Նիքոլայի ոտքն ինկաւ և
կեանքը խնդրեց: «Կը շնորհեմ քեզ
դայն, ըսաւ կայսրը վեհանձնութեամբ.
եթէ անարդեալ կեանք մը վարելու
քաջութիւնն ունիս, լաւ. և սակայն
գիտցած եղիր որ ասկէ աւելի բան մը
չեմ կրնար խոստանալ»:

Իշխանը Սիպերիա զրկուեցաւ: Ինչ
որ Չարը չէր ուզած հասնալ և իւր
յաջորդներն ալ չհասկցան, սա էր թէ
Սիպերիա այն դժնդակ ցաւերէն մին է,
որք Ռուս ժողովրդեան վայրյթը կը
չարժեն և երկրին ողջամիտ անձանց առ-
կայսրութիւնն համակրութիւնը կը նուա-
զեցնեն: Սիպերիոյ կեանքին և թշուա-
ռութեանց վրայ ստոյգ գաղափար չու-
նինք, սակայն բաւական է մեզ ըսել
թէ հարիւրաւոր այր և կին ամեն օր
առանց դատաստանի Սիպերիա կը զըր-
կուին:

— Պարսըլօնի ընկերվարականաց ժո-
ղովին 500 հոգի ներկայ գտնուեցին:
Նախագահը և քարտուղարը յետոյ ձեր-
բակալուեցին և ոչնչականաց նպատաւոր
յայտարարութիւններ ընելուն համար:
Լոնտրայի Ռուսերն ալ նոյն ժողովին ո-
րոշումներն ընդունեցին:

... Խմբագրապետ Տէր,

Սեբաստիոյ վիճակին քրտնաթոր Ա-
ռաջնորդ Գեր. Տ. Տ. Պետրոս Սրբազան
Արքեպիսկոպոս հանդերձեալ է Ս. պա-
տարագ մատուցանել և մխիթարել ժո-
ղովուրդն հոգեկորապէս յառաջիկայ կիւ-
րակէ 27 սեպտեմբեր յեկեղեցի Սրբոյն
Յակոբայ:

Արդ ի գիտութիւն համայն բարեպաշտ
եղբարց, հաճեցէք Տէր Խմբագրապետ,
հրատարակել ներկայս Չեր թերթին
մէջ և ընդունիլ կանխաւ խորհրդոյս
շնորհակալեաց հաւաստիքը:

Մնամք յարգանօք
Ի դիմաց Թաղ. խորհրդոյ
Ատենադպիր Ատենապետ
Բ. Ս. Բօլատեան Խ. Յ. Սարաճ
24 սեպտ. 1881
Քասըմ-փաշա

Զ Ձ Դ

Արևելեան Մամուլի գործակալութիւնը պատիւ ունի ծանուցանել Սրբոյ Հասարակութեան թէ այս անգամ ստացած է օգոստոսի ամսաթերթն ալ, զոր ձեռնարկած է ցրուել Պատ. բաժանորդաց:

Արևելեան Մամուլի օգոստոսի ամսաթիւրը կը պարունակէ. Ուղևորութիւն ի Կ. Պօլիս (Չիլիկիբեան), Իս. նամակները Միջազգային իրաւունք (Սվաճեան), Մարտիկոյ Հայկական մատուռ, Կիլիկիոյ կաթողիկոսական խնդիր, Բաղաքական, Բնական գիտութիւն:

Արևելեան Մամուլի գործակալութիւնը հրաւէր կը կարգայ բաժանորդ գրուել փափաքողաց որ դիմեն կալաթա, Կէօզէ Օղլու խան, թիւ 13, ի գրասենեակ Միացեալ Ընկերութեանց, որը խմբագրութեան կողմէն կընդունին մի որոշ գումար իրր նուէր:

1884 սեպտ 23

(Կնիք)

Կ. Պօլիս

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՈՒՆ ԵՒ ԿՆՈՋ

Հեղինակ Տօքթօր Է. Գլէման Բարիքի բժշկական ճեմարանէն. թարգմանեց 1877ի տպագրութենէն Ե. Արմաւիր:

Թէ ինչ պէտք է դիտան ամուսնացողը իրենց ամուսնութեան նախընթաց օրը. — Ինքզինք սիրցնելու միջոցները. — Ամուսնութեան ազդեցութիւնն ամուսնոց ֆիզիքականին և բարոյականին վերայ. — Ծննդական գործարանաց առողջարանութիւն. — Անկարողութիւն և իւր դարմանները. և ըն. և ըն:

Սոյն խիստ օգտակար գիրքը որ թէ ամուսնացելոց և թէ ամուսնութեան պատրաստողներու ընթերցման անհրաժեշտ է կը ծախուի ամէն գրավաճառի քով. Գին 8 զրուշ:

ԿՐԹՈՒԹԻՒՆ ՏԱՃԿ ԼԵՁՈՒԻ

Պ. Պ. ԳԱՆՔԱՅԵԱՆԻ

Հեղինակին սոյն գործն երրորդ անգամ տպագրուած է Միւհէնտիսեան ընտիր տաւերով, յանուն «հեգարան և ընթերցարան Օսմ. լեզուի»:

Գին 5 զրուշ

Կը գտնուի ամեն Հոյ գրավաճառաց քով. կեդրոնատեղին է Գավաթեան գրատուն:

ԱՆԳՂԻԵՐԷՆ ԼԵՁՈՒԻ ՈՒՍՈՒՑՈՒՄՆ

Խօսիլ, կարգալ, գրել. վեց ամուսն մէջ, ամեն օր մէկ մէկ ժամ գաստուռութեամբ հետևեալ տեղերը, հետևեալ ժամերու մէջ:

Ուզուն չարչուի մօտ Սէրասկէրի ճատտէն Միքայէլ աղային ընթերցարանը առաւօտուն ժամը 12ը և 3րօպէ անցած:

Սիրքէճի իսկէլէսին թիւ 72 մաղազան ժամը 3ին:

Փըչքէի փողոց թիւ 38, իգական սեռի համար ժամը 8ին:

Նիշանճի Սուրէնեան վարժարան ժամը 9ին:

Փըչքէի փողոց թիւ 38 արական սեռի համար գիշեր ժամը 2ին:

Դասաւորութեան պայմանաց համար պէտք է դիմել Ուզուն չարչուի գրուի Ֆրէնկեան գրատուն թ. 362:

Բ. Վարդուկեան

Ա Ձ Դ

Սիկարի թղթին ընտրելագոյնն է՝ Ռոպէնսօն անուանեալ Պրագիլիոյ թուղթը, որ կը գտնուի Տէմիրգարուլեան եղբարց վաճառատներն ի Ղալաթիա և ի Պօլիս, և Ֆրէնկեան գրատունն:

Ն. ՏԷՐ ԴԵՒՈՆԴԵԱՆՑ

Մ Ս Յ Ր Ե Ն Ի Լ Ե Ձ Ո Ւ

Դ. հատոր

Սոյն դասագրքին Դ. և վերջին հատորն ալ իւրոյն ընծայուած է. Պօլսոյ աշխարհաբառի վերածուած և ընտիր տպագրութեամբ: Գին 5 դահեկան արծաթ:

Կեդրոնատեղին է Միացեալ Ընկերութեանց գրասենեակն, կալաթա, Կէօզէ-օղլու խան, թիւ 11, 12, և 13:

Կը գտնուի Պօլսոյ բոլոր հոյ գրավաճառաց քով, նաև կալաթա, Պ. Յ. Չաքըրեանի հայկական թղթավաճառանոցը:

Դպրոցաց համար մասնաւոր զեղչ կըլուի:

Ա Ձ Դ

Գումարու Հիւսար աիպի Աճէժ տաղի կոչուած տեղը «Միութիւն (Էնօսիս) անուն ծովեղերեայ համադրային զբօսարան մը բացուած է ուր թէ եւրօպական և թէ տաճկական նուագածուներ կը նուագեն ուրբաթ, շաբաթ և կիրակի օրերը:

Յաճախորդը թէ ծովեղերեայ գիրքին, թէ ըմպելեաց մաքրութեան և թէ հանգստութեան մասին շատ գոհ կըլան: Ուզողը կընայ փորձել:



ՊԱՃՃԵՊԱՆ ՕՂՈՒՒ ՎԷ ԳՈՒՄ. Աստուգոյ իրգա փաշա խան Ե: 3

ԳՈՐԾԱՐԱՆ ՍԻԿԱՐԻ ԹՂԹԻ

Ս. Ղ. ՊԱՐՏԻՉՊԱՆԵԱՆ ԵՒ ԷՆԿ

ՐԻՁԱ ՓԱՇԱ ԽԱՆ Թ. 3

Այս անունով նոր գործարան մը բացուած է Րիզա փաշա խան թիւ 3 սենեակը, ուր կը պատրաստուին խիստ մեծ խնամով և աժան գնով ամէն տեսակ աղիւթ. թուղթ Մարսիլիա յէն յատկապէս բերուած ընտիր տեսակաց վրայ:

Գործարանի վարչութիւնը պատրաստ է մայրաքաղաքս գտնուած գովաբանութիւնը հետ բանակցիլ և ամենց ուզած տեսակաւ թուղթ պատրաստել. նոյնպէս պատրաստ է դաստներէն այս մասին յանձնարարութիւններ ընդունիլ և որոշուած մասնակին յանձնել, ինչ քանակութեամբ որ ուզին:

Վարչութիւնն սոյն ձեռնարկութեան հետ բարեկրթութիւնն ալ միացնել ուզելով, որոշած է վաճառման որոշումը ին 5 տո 0 0 ը Աղղ. Հիւսարաղային և Միացեալ Ընկերութեան նոյնիլ կէս առ կէս:

Վարչութիւնն կը յուսայ որ ճաշակի տէր և ազգային կարևոր հաստատութեանց նը պատուելու փափաք ունեցող ազգայինք պիտի յիշեն անուարի փորձ մ'ընել սոյն գործարանին հետ, զորս ըստ ամենայնի գոհ ընելու համար ջանք և աշխատութիւն չպիտի պակսին:

Կը ծախուի ամէն ծխախմորաց քով և կեդրոնատեղին է Րիզա փաշա խան թիւ 3 սենեակը Ս. Ղ. Պարտիչպանեան և Էնկ. Գործարանը:

ՅԱՆԿ ԳՐՈՑ Ի ՏՊԱՐԱՆԻ Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

Ղ. Փոյ.

Վարժութիւն ճայնաւոր մանկանց 6
Նկարագիր երկոց հայաստանեայց
Եկեղեցւոյ 3
Օստիանու քերթուած 2
Ո՞վ է մեղաւոր կանանց վերա.

Բերեալ 1 20

Հանգուցեալ Պ. Ե. Մ. Տնտեսեան տպարանէն իւրոյն ընծայուած վերոյիշեալ գրքերը կը վաճառուին իրենց գիներովը հատով աւնողի համար իսկ 40 ով աւնողի զեղչ կը լինի:

Կեդրոնատեղին է Պահճէ քարու մաքսատան կարգը կամուրջի մօտ Ս. Յ. Փափաղեան գրատունը. թիւ 56:

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ՅԱԹԷՆՍ ԵՒ Ի ՉՄԻՈՒՆ

Հանդերձ գիտողութեամբ նկարագրեաց Յ. Գուրգէն:

Պատմական տեղեկութիւններ պարունակող ընտիր գրքոյն մ'է խիստ յարմար դպրոցական պարգեւաբաշխութեանց որոյ 50 օրինակին գինը Ս. Փրկչի Աղղ. Հիւսարաղային յատկացեալ է:

Կը ծախուի բոլոր գրավաճառաց քով իգին 6 զրուշ:

Կեդրոնատեղին է Արամեան գրատունը:

ԳՈՐԾԱՐԱՆ ԵՒ ՆԻՃԷՏԻՍԱՌՈՍԻ

ԳՈՐԾԻ ԵՂԱՐԱՐ ԵՒ ԵՄՂԻՆԻ

409 Ղալաթա. Սանտրագըլար փողոց 409

Ստորագրեալքս սուկաբական բոլոր պատասխանատուութիւնը մեր վրայ առնելով Գօնքի եղբարց և Եանիկի հետ ընկերութեամբ Ղալաթիոյ Սանտրագըլար փողոց թիւ 430 գործատունն հաստատուելու ի վեր արժանապէս քաջախրուկեցանք պատուարժան յաճախորդաց բողոքութիւնէն: Ամէն ոք յաւ գնահատեց յմեր գործարանէն ելած ծխախմորս ընտիրութիւնը, ճաշակը և գիներուն չափաւորութիւնը տեսակներուն համեմատութեամբ: Ուստի և մեզ հարկ եղաւ, տուել ընդարձակ ասպարէզ մը տալ մեր գործարանութեանց:

Եւ նախ մեր գործարանն ու վաճառատունը իրօքեղանքս առաջնոց զիմացը 409 թիւ շէնքին մէջ, և և իւր անհամեմատ ընդարձակութեամբ խիստ յարմարութիւն ունի թէ մայրաքաղաքս թէ դաւաններէն և թէ օտար երկիրներէ եկած բազմաթիւ հըրամաններն յոյժ գոհացուցիչ կերպիւ և իտե՞թով կատարելու:

Երկրորդ ծխախմորս բերքն արտապրոգ ամեն կողմ և մասնաւոր յիշիճէ յատուկ գործակալներ կարգելով սկսած ենք մասնաւոր խնամօք պատրաստել սալ բերքը և ահա այս խնամոց և գոհողութեանց շնորհիւն է որ այսօր ամենքս իր և հոտուէտ ծխախմորներ կարող ենք մատակարարել նաև 150 նոց, 200 նոց, և 300 նոց և և և և լի բարձր գիներով ըստ տեսակին:

Այսուհետեւ ոչ ոք պիտի վարանի իւր ճաշակին յարմար ընտիր ծխախմոր ամեն մասին, բաւական է զիմել մեր վերոյիշեալ գործատունն ի Ղալաթիա Սանտրագըլար փողոց թիւ 409, և կամ ամեն ծխախմորներէ խնդրել մեր գործարանէն ելած ապաւանքներէն:

Դ՞ան. Օտար երկիրներէ ասպարէզ ուզողները կը մասնակցին այն մեղախորհին, զոր ունի՞նք կայսերական կառավարութիւնէն, որ է պանտրօյի տուրքէն ազատ ըլլալ, որով 1/10 ին 20 յան կուտնան:

Վաճառատուներն են.
Ղալաթիա Սանտրագըլար թիւ 409
Չընտան գարու Չէօլէկէճիլէր » 29
Էմին-Էմին » 56

ՏԵՄԻՐԳԱՓՈՒԼԵԱՆ ԵՂԱՐԱՐ

ՏԵՐ-ԽՄԵԱԳԻՐ

Մ. Յ ՄԵԼԻՔԵԱՆ

Րիզա փաշա խան թիւ 14